Կապարի օքսիդացած միներալի սուլֆիդացման գործընթացն ուսումնասիրելու համար որպես սուլֆիդարար ընտրվել է նատրիումի պոլիսուլֆիդը (Na_2S_5), որը ջրում անկայուն է և քայքայվում է՝ առաջացնելով նատրիումի սուլֆիդ և տարրական ծծումբ: Սուլֆիդացման գործընթացն ընթանում է ավելի արդյունավետ, քանի որ դրան մասնակցում են երկու սուլֆիդարար՝ նատրիումի սուլֆիդը և տարրական ծծումբը [5]: Սուլֆիդացումը կատարվել է ավտոկլավում՝ սուլֆիդացման ջերմաստիճանը բարձրացնելու նպատակով:


Հետազոտության արդյունքները. Որոշվել է հանքանյութի օպտիմալ մանրացման աստիճանը, համաձայն որի մանրացված հանքանյութի 70 %-ն ունի մինչև 0,074 մմ/հատիկաչափական կազմ:

Նկ. 1-ում բերված է աղացում $80^\circ C$ -ում (կոր 1) և ավտոկլավում $120^\circ C$ -ում (կոր 2), նատրիումի պոլիսուլֆիդի առկայությամբ, ցիրուսիտի սուլֆիդացման աստիճանի կախվածությունը գործընթացի տևողությունից:


Աղացում $80^\circ C$ -ում 60 րոպե տևողության դեպքում սուլֆիդացման աստիճանը կազմում է 63% (նկ. 1, կոր 1), ավտոկլավում ջերմաստիճանի բարձրացման գույքընթաց, 60 րոպե տևողության դեպքում, սուլֆիդացման աստիճանը մեծանում է՝ դառնալով 82% (նկ. 1, կոր 2):

Նկ. 2-ում բերված է օքսիդացած հանքանյութից կապարի և ցինկի կորզման ֆլուտացման սխեման, որի կիրառմամբ օքսիդացած հանքանյութից ֆլուտացումով

ստացվել է կապարի խտանյութ, իսկ ֆլոտացման պոչանքը, որը պարունակում է ցինկ, ենթարկվել է հետադարձ ֆլոտացիայի՝ ցինկի խտանյութ ստանալու նպատակով:




Նկ. 1. Նատրիումի պոլիսուլֆիդի առկայությամբ ցիրուսիտի՝ աղացում (կոր 1) և ավտոկլավում (կոր 2) սուլֆիդացման աստիճանի կախվածությունը գործընթացի տևողությունից



Նկ. 2. Օքսիդացած հանքանյութից կապարի և ցինկի ֆլոտացման սխեման

Օքսիդացած հանքանյութից կապարի առավելագույն կորզման գործընթացի ռեժիմների ընտրման նպատակով ուսումնասիրվել է նատրիումի պոլիսուլֆիդի տարբեր չափաբաժինների ազդեցությունը ֆլոտացման գործընթացի վրա (նկ. 3):

Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ նատրիումի պոլիսուլֆիդի պարունակության մեծացմանը զուգընթաց կապարի կորզման աստիճանը մեծանում է, իսկ կորի հետագա նվազումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է որոշ երակային միներալների ակտիվացմամբ: Որպես օպտիմալ չափաբաժին ընտրվել է նատրիումի պոլիսուլֆիդի 1000 գ/տ պարունակությունը:




Նկ. 3. Նատրիումի պոլիսուլֆիդի քանակի ազդեցությունը կապարի օքսիդացած հանքանյութի ֆլոտացման վրա

Որպես կարգավորիչ օգտագործվել է նատրիումի հեքսամետաֆոսֆատ: Կարգավորիչները կարող են մեծացնել ֆլոտացման գործընթացի ընտրողականությունը, ուժեղացնել հավաքիչի գործունեությունը և բարելավել կախության վիճակը:

Բուրիլ քսանտոգենատի ազդեցությունը սուլֆիդացված օքսիդային հանքանյութից կապարի ֆլոտացման գործընթացի վրա ներկայացված է նկ. 4-ում: Հետազոտության արդյունքում որպես օպտիմալ չափաբաժին ընտրվել է բուրիլ քսանտոգենատի 150 գ/տ պարունակությունը:

Ցինկի կորզման նպատակով կապարի ֆլոտացումից ստացված պոչանքը, որը ցինկի հանքանյութ է, ենթարկվել է հակադարձ ֆլոտացման: Այս դեպքում փրփրային արգասիք է անցնում դատարկ ապարը: Որպես հավաքիչ օգտագործվել է օկտադեցիլամին՝ 800 գ/տ պարունակությամբ, որն ունի փրփրեցնող հատկություն, և փրփրեցնելու լրացուցիչ միջոց չի պահանջվում:

Ըստ տեխնոլոգիական սխեմայի՝ բազմամետաղային օքսիդացած հանքանյութերից ֆլոտացմամբ կապարի և ցինկի կորզման աստիճանը կազմել է համապատասխանաբար 90 և 87%:



Նկ. 4. Բուրիչի քանակատի ազդեցությունը սուլֆիդացված օքսիդային հանքանյութից կապարի ֆլոտացման վրա

Եզրակացություն. Հետազոտվել է կապարի օքսիդացած միներալի՝ ցիրուսիտի՝ նատրիումի պոլիսուլֆիդով սուլֆիդացման գործընթացը: Սուլֆիդարարի ծախսը կազմել է 1000 գ/տ: Ավտոկլավում նատրիումի պոլիսուլֆիդով կապարի օքսիդային միներալի՝ ցիրուսիտի սուլֆիդացման աստիճանը կազմում է 82%: Օքսիդացած հանքանյութից կապարի ֆլոտացման համար օգտագործվել են 150 գ/տ բուրիչի քանակով, 20 գ/տ սոճու յուղ: Կապարի ֆլոտացման պոչանքը, որպես ցինկի օքսիդային հանքանյութ, ենթարկվել է հակադարձ ֆլոտացման՝ ցինկի խտանութ ստանալու նպատակով: Այս դեպքում որպես հավաքիչ օգտագործվել է օկտադեցիլամին՝ 800 գ/տ պարունակությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Абрамов А.А.** Флотационные методы обогащения.- 3-е изд.- М.: МГТУ, 2008.- 710с.
2. **Бектурганов Н.С., Абишев Д.Н.** Комплексное использование оксидного сырья тяжелых цветных металлов.- Алма-Ата: Наука, КазССР, 1989.- 212с.
3. **Калинин Ю.О.** Сульфидизация окисленных свинцовых руд полисульфидами натрия (на примере месторождения Доватка): Автореферат дис. ... канд. техн. наук.- Чита, 2005.- 19 с.
4. Պղնձի օքսիդացած հանքանյութի հիդրոջերմային սուլֆիդացումը մանրացման փուլում / **Ա.Հ. Հովսեփյան, Գ.Գ Շուրիկյան, Թ.Ա. Վանյան, Ս.Ա. Հարությունյան, Ա.Ռ. Հակոբյան** // ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ տեղեկագիր. ՏԳ սերիա.-2017.-Հ. LXX, № 4.- էջ 431 – 437:

5. Глазунов Л.А., Чернов В.Г. Полисульфиды - перспективные реагенты для флотации руд // Цветные металлы.- 1996.- №2.- С. 9-11.

ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 24.07.2020:

**С.Г. АГБАЛЯН, А.О. ОВСЕПЯН, С.А. АРУТЮНЯН, Т.Н. САФАРЯН,
Г.Г. ШОЛИНЯН, А.Р. АКОПЯН, М.А. ХАЧАТРЯН**

**ИССЛЕДОВАНИЕ ПРОЦЕССА ИЗВЛЕЧЕНИЯ СВИНЦА И ЦИНКА ИЗ
ПОЛИМЕТАЛЛИЧЕСКИХ ОКИСЛЕННЫХ РУД ФЛОТАЦИЕЙ**

Проведено обогащение окисленных минералов свинца и цинка флотацией, в результате чего путем сульфидизации и флотации из окисленных руд получен свинцовый концентрат, а хвост флотации подвергся обратной флотации для получения цинкового концентрата. В результате научно-экспериментальных исследований выбраны оптимальные параметры сульфидизации и флотации.

Ключевые слова: флотация, автоклав, сульфидизация, концентрат, обогащение, полисульфид натрия.

**S.G. AGHBALYAN, A.H. HOVSEPYAN, S.A. HARUTYUNYAN, T.N. SAFARYAN,
G.G. SHOLINYAN, A.R. HAKOBYAN, M.H. KHACHATRYAN**

**INVESTIGATING THE RECOVERY PROCESS OF LEAD AND ZINC FROM
POLYMETALLIC OXIDIZED ORES BY FLOTATION**

Beneficiation of oxidized lead and zinc minerals is carried out by flotation. Lead concentrate is obtained from the oxidized ores by sulfidation-flotation, and the flotation tailing is exposed to reverse flotation for obtaining zinc concentrate as a result of scientific and experimental studies, optimal parameters of sulfidation-flotation are selected.

Keywords: flotation, autoclave, sulphidization, concentrate, enriching, sodium polysulfide.

Ա.Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Լ.Ս. ՄԱԻԼՅԱՆ

**ՉԱՓԱԶԱՆՑ ԲԱՐԱԿ ԵՎ ԲԱՐԱԿ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄՇԱԿՄԱՆ ՕՊՏԻՄԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԸՆԴՈՒԹՅՈՒՆԸ**

Ոսկու և ոսկի-բազմամետաղային չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքային մարմիններն ունեն հանքաքարի համեմատաբար ոչ մեծ պաշարներ, հաճախ բարդ ձևաբանություն, փոփոխական հզորություն, տարածման երկարություն և անկման խորություն, օգտակար բաղադրիչի անհավասարաչափ բաշխվածություն, ոչ հազվադեպ՝ անկայուն հանքաքար ու պարփակող ապարներ և այլն:

Նպատակահարմար է հանքային մարմնի դիտարկվող հզորությունների տիրույթում ստորգետնյա մշակման օպտիմալ համակարգի ընտրությունն իրականացել հանքային մարմնի կամ դրա առանձին մասի «կրիտիկական հզորություն» գնահատանքային ցուցանիշի կիրառմամբ: Կայուն հանքաքարով և պարփակող ապարներով ներկայացված չափազանց բարակ զառիթափ հանքային մարմնի կամ դրա առանձին մասի դեպքում օպտիմալ է ենթահարկային շտրեկներով՝ հանքաքարի ճեղքային հանույթով, իսկ բարակ զառիթափ հանքային մարմնի կամ դրա առանձին մասի դեպքում՝ հանքաքարի պահեստավորմամբ մշակման համակարգը: Անկայուն հանքաքարով և պարփակող ապարներով ներկայացված չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքային մարմնի կամ դրա առանձին մասի դեպքում օպտիմալ է վերընթացներից հանքաքարի պոկմամբ և պահեստավորմամբ մշակման համակարգը:

Առանցքային բառեր. հանքային մարմին, ոսկի, հանքաքար, մշակման համակարգ, հզորություն, պարունակություն:

Ներածություն: Ոսկու և ոսկի-բազմամետաղային փոքր հզորությամբ՝ չափազանց բարակ և բարակ հանքերակների ստորգետնյա եղանակով շահագործման տեխնոլոգիաների ընտրության, զարգացման, կատարելագործման և նորերի ստեղծման հարցերը մշտապես գտնվել են մեծ թվով հետազոտողների ուշադրության կենտրոնում: Խնդրի կարևորությունը պայմանավորված է, որպես կանոն, այդ հանքերակներին բնորոշ բարդ լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմաններով. հանքաքարի համեմատաբար ոչ մեծ պաշարներ, հաճախ բարդ ձևաբանություն, փոփոխական հզորություն (արտահայտված նեղացումներով և փքվածքներով), տարածման երկարություն և անկման խորություն, օգտակար բաղադրիչի անհավասարաչափ բաշխվածություն, ինչպես նաև ոչ հազվադեպ անկայուն հանքաքար և պարփակող ապարներ և այլն:

Այդ հանքերակների մշակման համակարգերը սովորաբար ապահովում են ցածր տեխնիկատնտեսական ցուցանիշներ.

- հանքախորշային բանվորի աշխատանքի ցածր արտադրողականություն. ընդհանուր տեխնոլոգիական գործընթացների մոտավորապես 60% բաժին է ընկնում ձեռքի աշխատանքին,

- բլոկի շահագործման ցածր ինտենսիվություն,

- հանքաքարի համեմատաբար մեծ աղքատացում,

- որոշ դեպքերում նաև մեծ կորուստներ, որը հանքերակի հզորությամբ կանխորոշվող մաքրման տարածության փոքր լայնության հետևանք է:

Հայաստանում վերը նշված լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմաններով բնութագրվում են մի շարք գունավոր և ազնիվ մետաղների, այդ թվում՝ Տերտերասարի և Թունդիրգետի ոսկի-պղնձի, Ալավերդու պղնձի և այլ հանքավայրերը:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Հանքավայրերի ստորգետնյա մշակման համակարգերի կատարելագործման ոլորտում անցկացված հետազոտությունների վերլուծությունը վկայում է, որ չափազանց բարակ և բարակ հանքային մարմինների դեպքում մեծ թվով գիտնականներ հանքաքարի ստորգետնյա արդյունահանման տեխնոլոգիաների զարգացման գլխավոր ուղի են դիտում արտադրական գործընթացների մեքենայացումը: Դրա մասին է վկայում արտասահմանյան հանքերի գործունեության փորձը, որն արդեն իսկ հստակեցրել է հիմնական տեխնոլոգիական գործընթացների մեքենայացման երկու ուղղություն [1].

- նախապատրաստական, կտրման և մաքրման աշխատանքների գործընթացներում հորատման սարքավորումների հետ միասին փոքրագաբարիտ բարձր-առերող մեքենաների օգտագործում,

- ուղղաձիգ հանքախորշերով հանքամարմինների մշակման համար մաքրման մեքենայացված համալիրների օգտագործում:

Վերջինի դեպքում հանքային մարմինների հզորությունը և տեղադրման տարրերը չպետք է լինեն փոփոխական, պետք է բացակայեն տեկտոնական խզվածքները և դատարկ ապարների նրբերակները, հանքաքարը և պարփակող ապարները պետք է ունենան միջինից բարձր կայունություն:

Դիտարկվող հարցի վերաբերյալ իր հեղինակավոր կարծիքն է արտահայտել ակադ. Մ.Ի. Ագոշկովը [2], ով, խոր վերլուծության ենթարկելով մի շարք ստորգետնյա հանքերի արտադրական գործունեության արդյունքները, եզրահանգել է, որ մշակման համակարգերի կատարելագործումը պետք է ընթանա հետևյալ երկու ուղղությամբ.

1) բարձր արտադրողական մեքենայացման միջոցների հետ հանքաքարի արդյունահանման տեխնոլոգիայի հարմարեցում,

2) մաքրման տարածության լայնության նվազեցում:

Չափազանց կարևորելով ներկա գիտատեխնիկական առաջաընթացի պայմաններում ստորգետնյա լեռնային աշխատանքների, այդ թվում՝ հանությամբ բլոկի նախապատրաստման, կտրման և մաքրահանման տեխնոլոգիական գործընթացների մեքենայացման աստիճանի բարձրացումը՝ ուղղված հանքախորշային բանվորի աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ հանքաքարի արդյունահանման ինքնարժեքի կրճատմանը, միևնույն ժամանակ, այն չի կարող դիտարկվել որպես չափազանց բարակ և բարակ հանքային մարմինների մշակման համակարգերի կատարելագործման առաջնային ուղղություն: Այդ իմաստով գերիշխող դեր ունի մաքրման տարածության լայնությունը, որի նվազագույն մեծությունը կախված է զանգվածից հանքաքարի պոկման և արտաթողման գործընթացից ու մաքրման տարածությունում լեռնային սարքավորումների տեղավորման և ամրակապի տեղադրման պայմանից:

Չափազանց բարակ և բարակ հանքերակների դեպքում կողային ապարների պոկմամբ մաքրման տարածության լայնության մեծացումը հանգեցնում է հանքաքարի գերադաստացմանը, որի հարուցած տնտեսական վնասը որոշակի պայմաններում կարող է գերազանցել աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ պայմանավորված հանքաքարի արդյունահանման կրճատվող ծախսերը: Հետևաբար, բարակ և չափազանց բարակ հանքերակների դեպքում բարձր արտադրողական մեքենայացման միջոցների օգտագործումը պետք է դիտարկել մաքրման տարածության լայնության փոքրացման խնդրի լուծման շրջանակում:

Հանքային մարմինների կամ դրանց առանձին մասերի (հաշվարկային կամ հանությամբ բլոկների, ենթաբլոկների և այլն) հզորությունից կախված՝ հանքաքարի արդյունահանման ինքնարժեքի և աղքատացման փոփոխման դինամիկան նույնը չէ մշակման տարբեր համակարգերի կիրառման դեպքում: Քանի որ չափազանց բարակ և բարակ հանքային մարմինների դեպքում աղքատացումը զգալիորեն կախված է հզորությունից և մշակման համակարգից, ապա տվյալ հզորությունների միջակայքում վերոնշյալ կախվածությունները առավել ցայտուն են երևակվում:

Հանքերակների դիտարկվող հզորությունների տիրույթում ստորգետնյա մշակման օպտիմալ համակարգի ընտրությունը նպատակահարմար է իրականանել հանքային մարմնի կամ դրա առանձին մասի «կրիտիկական հզորություն» գնահատանքային ցուցանիշի օգտագործմամբ:

«Կրիտիկական հզորությունը» (m_k) օգտակար հանածոյի հանքամարմնի այն հզորությունն է, որի դեպքում համեմատվող մշակման համակարգերը ապահովում են հավասար արդյունավետություն [3]:

Մշակման օպտիմալ համակարգի ընտրության առավել ընդանուր նպատակային ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

$$(\alpha_i - \alpha_{\min})Q_{hi}K_{li} \rightarrow \max, \quad (1)$$

որտեղ α_i - ն հանութային բլոկի հանքաքարային զանգվածում օգտակար բաղադրիչի փաստացի պարունակությունն է ըստ i -րդ մշակման համակարգի, $\%(q/tn)$, $\alpha_{\min}$ - ն՝ օգտակար բաղադրիչի նվազագույն արդյունաբերական պարունակության բնեղեն մեծությունը՝ ըստ i -րդ մշակման համակարգի, $\%(q/tn)$, Q_{hi} - ն՝ հանութային բլոկում հանքաքարի հաշվեկշռային պաշարները՝ ըստ i -րդ մշակման համակարգի, tn , K_{li} - ն՝ ընդերքից օգտակար հանածոյի կորզման գործակիցը՝ ըստ i -րդ մշակման համակարգի, *միավորի մասերով*:

(1) արտահայտությունը թույլ է տալիս օգտակար բաղադրիչի եզրագծային պարունակության տարբեր արժեքների դեպքում իրականացնել օպտիմալ համակարգի ընտրություն, իսկ եթե պարփակող ապարների հետ հանքային մարմինների հպումները հստակ են (հանքային մարմիններն ունեն հստակ երկրաբանական սահմաններ), ապա (1) նպատակային ֆունկցիան կարող է ընդունել հետևյալ տեսքը.

$$(\alpha_i - \alpha_{\min})K_{li} \rightarrow \max: \quad (2)$$

Մրցունակ մշակման համակարգերի դեպքում, երբ հանքաքարի կորուստները գործնականում նույնն են, (2) նպատակային ֆունկցիան ընդունում է հետևյալ պարզ տեսքը.

$$\alpha_{\min} \rightarrow \min: \quad (3)$$

Ոսկու հանքաքարով ներկայացված հանքավայրի ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության բնեղեն մեծությունն ըստ i - րդ մշակման համակարգի ($\alpha_{\min Au}$, q/tn) որոշվում է հետևյալ բանաձևով [3].

$$\alpha_{\min Au} = \frac{r_{\min Au}(\beta - b) + b r_{Au}}{(r_{Au}(1 - a) + a r_{\min Au})K_{ni}}, \quad (4)$$

որտեղ $r_{\min Au}$ - ն ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության արժեքային արտահայտությունն է ըստ i - րդ մշակման համակարգի, $\$/tn$, β - ն՝ խտանյութում ոսկու պարունակությունը, (q/tn) , a և b - ն՝ տվյալ տիպի հանքաքարի համար հաստատուն թվային գործակիցները, r_{Au} - ն՝ ոսկու խտանյութի գինը, $\$/tn$, K_{ni} - ն՝ արդյունահանման ժամանակ հանքաքարի որակի փոփոխման գործակիցը՝ ըստ i - րդ մշակման համակարգի, *միավորի մաս*:

Եթե ընդունենք, որ հարստացման պոչանքներում ոսկու պարունակությունը հաստատուն մեծություն է, ապա (4) բանաձևը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$\alpha_{\text{miniAu}} = \frac{\Gamma_{\text{miniAu}}}{\Gamma_{\text{Au}} K_{\text{ni}} \varepsilon_{\text{Au}}}, \quad (5)$$

որտեղ Γ_{Au} – ն խտանյութում ոսկու զինն է, $\$/q$, ε_{Au} – ը՝ խտանյութում ոսկու կարգման գործակիցը, *միավորի մաս*:

Ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության արժեքային արտահայտությունը ներկայացնում է հանքաքարի արդյունահանման և հարստացման լրիվ ծախսերի ու հիմնական ֆոնդերի պասսիվ մասի՝ շենքերի և շինությունների ամորտիզացիոն հատկացումների ու լեռնակապիտալ աշխատանքների մարման տարբերությունը: Հետևաբար.

$$\Gamma_{\text{miniAu}} = (\overline{\sigma}_{\text{hi}} + \overline{\sigma}_{\text{այլ}}) + \overline{\sigma}_{\text{հար}} + \overline{\sigma}_{\text{վ}}, \quad (6)$$

որտեղ $\overline{\sigma}_{\text{hi}}$ – ն 1 *տ* հանքաքարի արդյունահանման ինքնարժեքն է ըստ *i* – թղ մշակման համակարգի, $\$/տ$, $\overline{\sigma}_{\text{այլ}}$ – ը՝ ստորգետնյա հանքի այլ տեսակարար ծախսերը՝ առանց ստորգետնյա հանքի շենքերի և շինությունների ամորտիզացիոն հատկացումների ու լեռնակապիտալ աշխատանքների մարման, $\$/տ$, $\overline{\sigma}_{\text{հար}}$ – ը՝ հանքաքարի հարստացման ինքնարժեքը՝ առանց հարստացուցիչ ֆաբրիկայի շենքերի և շինությունների ամորտիզացիոն հատկացումների, $\$/տ$, $\overline{\sigma}_{\text{վ}}$ – ն՝ լեռնահարստացուցիչ կոմբինատի տեսակարար վերադիր ծախսերը, $\$/տ$:

$$\overline{\sigma}_{\text{hi}} = \overline{\sigma}'_{\text{hi}} + (\overline{\sigma}''_{\text{hi}}/m_{\text{fi}}), \quad (7)$$

որտեղ $\overline{\sigma}'_{\text{hi}}$ – ն համեմատական ծախսերն են ըստ *i* – թղ մշակման համակարգի, $\$/տ$, $\overline{\sigma}''_{\text{hi}}$ – ն՝ մաքրման տարածության ամբողջ լայնության վրա հաստատուն ծախսերը՝ ըստ *i* – թղ մշակման համակարգի, $\$/տ$, m_{fi} – ն՝ մաքրման տարածության լայնությունը՝ ըստ *i* – թղ մշակման համակարգի, *մ*:

Հետազոտության արդյունքները: Չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքային մարմինների դեպքում տեխնիկապես կիրառելի են ստորգետնյա մշակման հետևյալ համակարգերը.

I. հանքաքարի անջատ հանույթով և պոկված պարփակող ապարներով հանութային տարածության լցափակմամբ,

II. ենթահարկային շտրեկներով՝ հանքաքարի ճեղքային հանույթով,

III. վերընթացներից հանքաքարի պոկմամբ և պահեստավորմամբ,

IV. հանքաքարի պահեստավորմամբ,

V. առաստաղաաստիճանային հանույթով՝ պահանգային ամրակապմամբ,

VI. վարընթաց շերտերի հանույթով և պոկված կողային ապարներով հանութային տարածության լցափակմամբ,

VII. վարընթաց շերտերի հանույթով և միջշերտային երկաթբետոնե երեսարկով:

Թվարկված մշակման համակարգերից III, VI և VII-ը կիառելի են նաև անկայուն հանքաքարի և պարփակող ապարների առկայության դեպքում:

Ինչպես երևում է ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության բնեղեն մեծության որոշման (5) բանաձևից, հաստատուն են խտանյութում ոսկու գինն ու խտանյութում ոսկու կարգման գործակիցը, իսկ փոփոխական՝ ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության արժեքային արտահայտությունն ու արդյունահանման ժամանակ հանքաքարի որակի փոփոխման գործակիցը:

Հաշվի առնելով վերոհիշյալ մշակման համակարգերի կառուցվածքային տարրերի առանձնահատկությունները և մի քանի հանքավայրերի հումքային հենքի վրա գործող հանքահարստացուցիչ կոմբինատների տեխնիկատնտեսական ցուցանիշները, աղյուսակում բերվում են Γ_{miniAu} -ի, K_n -ի և α_{miniAu} -ի որոշման արտահայտություններն ըստ դիտարկվող մշակման համակարգերի, երբ $Q_{\text{Au}}=48 \text{ } \$/q$ և $\varepsilon_{\text{Au}}=0,9$:


Քանի որ դիտարկվող մշակման համակարգերը գործնականում չեն տարբերվում հանքաքարի կորուստներով, ապա օպտիմալ մշակման համակարգերի ընտրությունը նպատակահարմար է իրականացնել հանքային մարմնի «կրիտիկական հզորություն» գնահատանքային ցուցանիշի միջոցով: Այդ դեպքում բավական է ըստ մրցունակ մշակման համակարգերի հավասարացնել α_{miniAu} -ի որոշման արտահայտությունները:

Աղյուսակ

Հանքային մարմնի m -ից կախված Γ_{miniAu} -ի, K_n -ի և α_{miniAu} -ի որոշման բանաձևերն ըստ տեխնիկայես կիրառելի մշակման համակարգերի

Մշակման համակարգի համարը	$m, \text{ մ}$	$\Gamma_{\text{miniAu}}, \text{ } \$/\text{տ}$	K_n , միավորի մաս	$\alpha_{\text{miniAu}}, q/\text{տ}$
I	$0.2 < m \leq 0.7$	$64.24 + 4.93/(m+0.2)$	$m/(m+0.2)$	$1.49 + 0.41/m$
II	$0.2 < m < 0.6$	$57.15 + 8.51/(0.57m + 0.46)$	$m/(0.57m + 0.46)$	$0.75 + 0.81/m$
	$0.6 \leq m < 1.3$	$57.15 + 8.51/(m+0.2)$	$m/(m+0.2)$	$1.32 + 0.46/m$
III	$0.2 < m < 1.3$	$60.80 + 5.40/(0.67m + 0.63)$	$m/(0.67m + 0.63)$	$0.94 + 1.01/m$
	$1.3 \leq m < 2.0$	$60.80 + 5.40/(m+0.2)$	$m/(m+0.2)$	$1.41 + 0.41/m$
IV	$0.2 < m \leq 1.0$	62.00	$m/1.2$	$1.72/m$
	$1.0 \leq m < 2.0$	$57.92 + 4.90/(m+0.2)$	$m/(m+0.2)$	$1.34 + 0.38/m$
V	$0.2 < m \leq 0.8$	61.50	$m/1.0$	$1.42/m$
	$0.8 \leq m < 2.0$	$58.50 + 3.0/(m+0.2)$	$m/(m+0.2)$	$1.35 + 0.34/m$
VI	$0.2 < m \leq 2.0$	$61.80 + 7.0/(m+0.65)$	$m/(m+0.65)$	$1.43 + 1.09/m$
VII	$0.2 < m \leq 1.3$	67.15	$m/1.5$	$2.33/m$
	$1.3 \leq m < 2.0$	$65.50 + 2.47/(m+0.2)$	$m/(m+0.2)$	$1.52 + 0.36/m$

Նկ. 1-ում պատկերված են կայուն հանքաքարի և պարփակող ապարների դեպքում, ըստ դիտարկվող մշակման համակարգերի հանքային մարմնի կամ դրա առանձին մասի հզորությունից (m) կախված, ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության (α_{miniAu}) փոփոխման կորերը:



Նկ. 1. Կայուն հանքաքարի և պարփակող ապարների դեպքում m -ից կախված α_{miniAu} փոփոխման օրինաչափությունները


Նկ. 1-ում բերված կորերի վերլուծությունը ցույց է տալիս, որ,

- հանքային մարմնի կամ դրա առանձին մասի մինչև 0,54 t հզորությունը օպտիմալ է հանքաքարի անջատ հանույթով և պոկված պարփակող ապարներով հանությամբ տարածության լցափակմամբ (I), իսկ 0,54 t -ից մեծ հզորության դեպքում՝ ենթահարկային շտրեկներով՝ հանքաքարի ճեղքային հանույթով (II) մշակման համակարգը,

- հանքային մարմնի կամ դրա առանձին մասի մինչև 0,73 t հզորությունը օպտիմալ է ենթահարկային շտրեկներով՝ հանքաքարի ճեղքային հանույթով (II) համակարգը, իսկ 0,73 t -ից մեծ հզորության դեպքում՝ առաստաղաաստիճանային հանույթով՝ պահանգային ամրակապմամբ (V) մշակման համակարգը,

- կայուն հանքաքարի և պարփակող ապարների դեպքում հանքային մարմնի կամ դրա առանձին մասի 0,8 t -ից մինչև 2,0 t հզորության տիրույթում հանքաքարի պահեստավորմամբ մշակման համակարգը (IV) տնտեսական առումով զիջում է առաստաղաաստիճանային հանույթով՝ պահանգային ամրակապմամբ (V) մշակման համակարգին, քանի որ այն ապահովում է ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության առավել բարձր թվային արժեքներ:

Նկ. 2-ում պատկերված են անկայուն հանքաքարի և պարփակող ապարների դեպքում, ըստ դիտարկվող մշակման համակարգերի հանքային մարմնի կամ դրա առանձին մասի հզորությունից (m) կախված, ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության (α_{miniAu}) փոփոխման կորերը:



Նկ. 2. Անկայուն հանքաքարի և պարփակող ապարների դեպքում m -ից կախված α_{miniAu} փոփոխման օրինաչափությունները

Նկ. 2-ում բերված կորերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկայուն հանքաքարի և պարփակող ապարների դեպքում հանքային մարմնի կամ դրա առանձին մասի 0,2 t -ից մինչև 2,0 t հզորության տիրույթում տնտեսապես առավել ձեռնտու է վերընթացներից հանքաքարի պոկմամբ և պահեստավորմամբ (III) մշակման համակարգի կիրառումը, քանի որ, այլ հավասար պայմաններում, այն ապահովում է ոսկու նվազագույն արդյունաբերական պարունակության առավել ցածր թվային արժեքներ:

Եզրակացություն.

1. Կայուն հանքաքարով և պարփակող ապարներով ներկայացված չափազանց բարակ զառիթափ հանքային մարմնի կամ դրա առանձին մասի մինչև 0,54 t հզորությունը օպտիմալ է հանքաքարի անջատ հանույթով և պոկված պարփակող ապարներով հանութային տարածության լցափակմամբ, 0,54 t -ից մինչև 0,73 t հզորությունը՝ ենթահարկային շտրեկներով՝ հանքաքարի ճեղքային հանույթով մշակման համակարգի կիրառումը:

Մակայն հանքաքարի անջատ հանույթով և պոկված պարփակող ապարներով հանութային տարածության լցափակմամբ մշակման համակարգին հատուկ թերությունների (լեռնային աշխատանքների կազմակերպման դժվարությո-

А.Г. ОГАНЕСЯН, Л.С. МАИЛЯН

**ВЫБОР ОПТИМАЛЬНЫХ СИСТЕМ ПОДЗЕМНОЙ РАЗРАБОТКИ
КРУТОПАДАЮЩИХ ВЕСЬМА ТОНКИХ И ТОНКИХ РУДНЫХ ТЕЛ**

Весьма тонкие и тонкие крутопадающие золоторудные и золотополиметаллические рудные тела имеют сравнительно небольшие запасы руды, часто сложную морфологию, изменчивую мощность, длину простираения и глубину падения, неравномерное распределение полезного компонента, нередко неустойчивую руду и вмещающие породы и др. В рассматриваемом диапазоне мощностей рудных тел выбор оптимальной системы подземной разработки целесообразно осуществлять, используя оценочный показатель “критическая мощность” рудного тела или отдельной его части.

При весьма тонком крутопадающем рудном теле или отдельной его части, представленной устойчивой рудой и вмещающими породами, оптимальна система разработки подэтажными штреками со щелевой выемкой руды, а при тонком крутопадающем рудном теле или отдельной его части - система разработки с магазинированием руды. При весьма тонком и тонком крутопадающем рудном теле или отдельной его части, представленной устойчивой рудой и вмещающими породами, оптимальна система разработки с магазинированием руды с отбойкой шпурами из восстающих.

Ключевые слова: рудное тело, золото, руда, система разработки, мощность, содержание.

A.H. HOVHANNISYAN, L.S. MAILYAN

**CHOOSING THE OPTIMAL UNDERGROUND MINING SYSTEMS OF EXTRA
THIN AND THIN STEEPLY DIPPING ORE BODIES**

Extra thin and thin steeply dipping gold and gold-polymetallic ore bodies have relatively small ore reserves, often complicated morphology, variable thickness, strike length and depth of fall, uneven distribution of the useful component, often unstable ore and host rocks, etc. In the considered range of ore body thickness, it is advisable to choose the optimal underground mining systems by using the “critical thickness” rating indicator of the ore body or its individual part.

With an extra thin steeply dipping ore body or its separate part represented by stable ore and host rocks, a mining system with sub-floor drifts with slit ore excavation is optimal, and with a thin steeply dipping ore body or its separate part - a mining system with ore storage. With an extra thin and thin steeply dipping ore body or its separate part of it represented by stable ore and host rocks, a mining system with ore storage breaking by blasting holes from risings is optimal.

Keywords: ore body, gold, ore, mining system, thickness, optimal, content, extra thin.

Ա.Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Ա.Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Մ.Գ. ՂԱԶԱՐՅԱՆ,
Ո.Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ, Գ.Գ. ՄԵՎՈՅԱՆ, Կ.Ի. ՓՅՈՒՄԿՅՈՒԼՅԱՆ


**ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԳԵՂԱՆՈՒՇԻ ՊՈԶԱՄԲԱՐԻ
ՇՐՋԱԿԱՑՔՈՒՄ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԱՍՈՒԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ
ԲԱՑԱՀԱՆՔԻ ՈՒ ԱՐԾՎԱՆԻԿԻ ՊՈԶԱՄԲԱՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ
Կ-ՖՈՆԻ ԵՎ ՆՍՈՒՇԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Ներկայացված են Կապանի լեռնահարստացման և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատներում շահագործվող Գեղանուշի և Արծվանիկի պոչամբարների և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բացահանքի Կ-ֆոների հետազոտման արդյունքները: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բացահանքի շրջակայքից վերցրած նմուշները ենթարկվել են Կ-սպեկտրաչափական վերլուծության: Կ ճառագայթային ֆոնի չափման վերաբերյալ հետազոտություններն իրականացվել են SPARCS-M1 համակարգի միջոցով:

Նշված տարածքներում Կ-ֆոնի գնահատմամբ ռադիացիոն-էկոլոգիական ուսումնասիրությունն իրականացվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) և «Բիոգեոտեխ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերին համապատասխան:

Առանցքային բառեր. պոչամբար, ճառագայթային ֆոն, ռադիոակտիվ ճառագայթման աղբյուրներ, սպեկտրային վերլուծություն, Կ-ֆոնի հետազոտություն, շարժական համակարգ:

SPARCS-M1 համակարգը (սպեկտրալ առաջադեմ ռադիոլոգիական համակարգչային համակարգ), որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը ստացել է ԱՄՆ Էներգետիկայի նախարարության միջուկային անվտանգության ազգային վարչությունից (NNSA), արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման դեպքում ռադիոակտիվ աղբյուրների որոնման, նույնականացման և սպեկտրալ վերլուծության համակարգերից մեկն է: SPARCS-M1-ը շարժական և բազմապլատֆորմ առաջավոր համակարգ է՝ բաղկացած դետեկտորների մոդուլից, հայտնաբերման և հեռաչափման սարքից (ATU) ու հարվածադիմացկուն նոսրերից (նկ. 1):



Նկ.1. SPARCS-M1 համակարգի արտաքին տեսքը

SPARCS-M1 համակարգը [1] կարող է կիրառվել նաև ճառագայթային ֆոնի չափման դեպքում և գրանցել γ -ճառագայթման ֆոնը, սպեկտրային տվյալները, ինչպես նաև չափման վայրի GPS կոորդինատները: Ցանկացած չափման կետի բնութագրական տեղեկություն ընդգրկում է տվյալ չափման կետի հերթական համարը, օրը, ժամը, աշխարհագրական դիրքը և POD-դետեկտորներով գրանցված ազդանշանների գումարային հաշվումների (gross count-GC) քանակը:

Դետեկտորներով գրանցվող ազդանշանները ցույց են տալիս γ -ճառագայթման գերազանցումը ֆոնայինի համեմատ, ինչը ներկայացվում է որպես Golf տիպի ազդանշան «0...10 արժեքների սանդղակով»: Լրացուցիչ դետեկտորների առկայության դեպքում համակարգը կարող է գրանցել նաև նեյտրոնային ճառագայթման գերազանցումը ֆոնայինի համեմատ՝ որպես November տիպի ազդանշան:


SPARCS-M1 համակարգն ունի բավականին լայն հնարավորություններ՝ ճառագայթային ֆոնը բավականին բարձր ճշտությամբ գնահատելու համար ինչպես բնականոն, այնպես էլ վթարային իրավիճակներում: Համակարգի առավելություններից են՝

- համեմատաբար թեթև և բավականաչափ ամուր համակարգի՝ ցանկացած ցամաքային, օդային և ջրային տրանսպորտի վրա մոնիտավորում և շահագործումը բավականին դյուրին են,
- համակարգն ունի կիրառման լայն շրջանակ, այդ թվում՝ պորտալային մոնիտորինգի, ֆոնային չափումների և վթարային արձագանքման գործողությունների իրականացման համար:

1. Գեղանուշի պոչամբարի շրջակայքում γ -ֆոնի հետազոտություն.

Կապանի լեռնահարստացման կոմբինատում շահագործվող Գեղանուշի պոչամբարի շրջակայքում ճառագայթային ֆոնի հետազոտություններն իրականացվել են SPARCS-M1 համակարգով՝ γ -ճառագայթման ֆոնի գրանցմամբ, ընդ որում՝ համեմատական վերլուծության համար իրականացվել են չափումներ նաև հարակից Գեղանուշ գյուղի մոտակայքում և Կապան քաղաքում: Չափումների երթուղու ընդհանուր երկարությունը կազմել է մոտավորապես 2,5 կմ և Google Earth ֆորմատով այն պատկերված է նկ. 2-ում:

SPARCS-M1 համակարգի գրանցումների ճշտությունը ստուգելու համար չափումներ են կատարվել նաև LUDLUM MODEL 3 անհատական դոզիմետրով: Երկու սարքերով չափման նույն կետերում գրանցվել է ճառագայթման էքսպոզիցիոն բաժնեչափի հզորության նույն արժեքը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ չափումները ճշգրիտ են: Չափումները իրականացվել են պոչամբարի հյուսիսային և հարավային կողմերում: Չափումների ճշգրտության գնահատման նպատակով իրականացվել են կրկնակի չափումներ:



Նկ. 2. Գեղանուշի պոչամբարի շրջակայքում և հարակից բնակելի վայրերում չափումների ընդհանուր պատկերը

Դրանք իրականացվել նաև պոչամբարի հյուսիսային և հարավային կողմերում գտնվող ամբարտակի հողային ծածկույթի մասում: Երթուղու երկայնքով չափման կետերում գրանցվել է 9 հատ Golf4 ազդանշան: Նշված ազդանշաններից 4-ը գրանցվել են պոչամբարի շրջակայքում և դեպի գյուղ գնացող գերեզմանոցի մոտակայքում: Տվյալ կետերի համար չափման արդյունքները համընկնում են նաև հետադարձ ճանապարհին գրանցված արդյունքների հետ:

Պոչամբարի շրջակայքում չափումների ընդհանուր պատկերը ներկայացված է նկ. 3-ում: Չափումների ժամանակ գրանցված կանաչ գույնը համապատասխանում է 1000...2000 GC (Gamma Count), դեղին գույնը՝ 2000...4000 GC: Չափումների ընթացքում 1000 GC-ից պակաս արժեքներ չեն գրանցվել (ինչը կպատկերվեր կապույտ գույնով), ինչպես նաև չի գրանցվել 2500 GC-ից ավելի մակարդակ:



Նկ. 3. Պոչամբարի հարակից տարածքում չափումների ընդհանուր պատկեր- քարտեզը՝ Google Earth ֆորմատով

Նկ. 4-ում բերված է պոչամբարի հարավային հատվածում Golf 4 ազդանշանի գրանցման կետի արտապատկերումը (1147-րդ չափում) դետեկտորների գրանցման ներկայացմամբ (GC1՝ 1050, GC2՝ 976, գումարային՝ 2026):



Նկ. 4. Պոչամբարի հարավային հատվածում Golf 4 ազդանշանի արտապատկերումը


Իրականացված չափումների արժեքները՝ բնութագրական որոշ կետերում, բերված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1

Չափումների արժեքները բնութագրական որոշ կետերում


Հ/հ	Չափման վայր	Գումարային GC	Կճառագայթման համարժեք բաժնեչափի հզորություն, մկԶվ/ժ
1	Պոչամբարի հարավային հատված	~ 1400	0,05...0,06
2	Պոչամբարի հարավային հատվածի ամբարտակի հողային ծածկույթ (դեպի շահագործվող մաս)	1450...1550	մինչև 0,06
3	Հարավային ամբարտակի ճահճային հատված	2000...2100	0,07
4	Պոչամբարի հյուսիսային հատված	~ 2000	~ 0,07
5	Պոչամբարի հյուսիսային մասի ամբարտակի հողային ծածկույթ	1500...1600	0,06...0,07
6	Դեպի Գեղանուշ գյուղ (ավելի բարձր կետ, քան պոչամբարն է)	1700...1800	0,06
7	Գեղանուշ գյուղի գերեզմանների մոտ	2100...2150	0,07
8	Պոչամբարի կողմից Կապանի մուտք	2000...2200	0,07...0,08
9	Կապան քաղաքի կենտրոն	2200...2400	0,08...0,1


Նկ. 5-ում պատկերված է համապատասխան չափումների արդյունքը Կապան քաղաքի կենտրոնում:



Նկ. 5. Կապան քաղաքի կենտրոնում չափման արտապատկերումը

2. Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) բացահանքի տարածքում և նրա շրջակայքում γ -ֆոնի հետազոտությունը. γ ճառագայթային ֆոնի չափման հետ կապված հետազոտություններն իրականացվել են նույն SPARCS-M1 համակարգի միջոցով, ընդ որում՝ γ ճառագայթային ֆոնի համեմատական վերլուծության նպատակով չափումներ իրականացվել նաև հանքին հարակից գյուղի մոտակայքում և Կապան-Քաջարան ճանապարհի երկայնքով: Իրականացված չափումների երթուղու ընդհանուր երկարությունը կազմել է մոտավորապես 10 կմ: Երթուղին համապատասխան չափման կետերով ու զբանցված ազդանշաններով պատկերված է նկ. 6- ում Google Earth ֆորմատով:





Նկ. 6. Չանգեզուրի ՊՄԿ-ում շահագործվող հանքի ու հարակից գյուղի մերձակայքը

Չափումներն իրականացվել են հանքի գրեթե ողջ շրջագծով՝ ներառյալ դրա եզրագծի, բացահանքի, խոշոր ջարդման արտադրամասի և դատարկ ապարների լցակույտերի տարածքները: Ստացված տվյալների ճշտությունը գնահատելու նպատակով չափումներն իրականացվել են նաև երթուղու հետադարձ ճանապարհին:

Չափումների ընթացքում գրանցված և γ ճառագայթման վերաբերյալ տեղեկություն պարունակող ազդանշաններից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացրել ֆոնային արժեքները զգալիորեն գերազանցող Golf4 ու Golf5 ազդանշանները: Ընդհանուր առմամբ, չափումների ընթացքում գրանցվել են 14 հատ ալդալիսի ազդանշաններ, որոնցից միայն մեկն է եղել Golf5 ազդանշան: Այն գրանցվել է բացահանքի տարածքում, որին համապատասխանել է γ ճառագայթման 0,22 մկՋվ/ժ համարժեք բաժնեչափի հզորություն (եզրակացություն 3.1):

Հանքի տարածքում, մասնավորապես դրա եզրագծի և դատարկ ապարների լցակույտերի մոտ գրանցված մյուս ազդանշանները, ներառյալ վերոնշյալ 14 ազդանշաններից 13-ը, եղել են Golf1...Golf4 ազդանշաններ, որոնք հիմնականում պայմանավորված են եղել տվյալ չափման կետին նախորդող կետի՝ γ ֆոնային ճառագայթման համեմատ որոշակի գերազանցմամբ: Այդ 13 հատ ազդանշաններն ունեցել են γ ճառագայթման 0,11...0,16 մկՋվ/ժ համարժեք բաժնեչափի հզորություններ: Որոշ դեպքերում, օրինակ, 1273-րդ, 1274-րդ, 2871-րդ և 5741-րդ չափման կետերում, SPARCS-M1 համակարգը որպես ազդանշանի պատճառ գրանցել է TC-99, իսկ մյուս դեպքերում՝ Th-232, I-131, Cs-137 և U-235:

Հանքի տարածքին հարակից գյուղի մերձակայքում իրականացված չափումների ընթացքում γ ճառագայթման համարժեք բաժնեչափի հզորությունը նվազել է՝ կազմելով 0,08...0,14 մկՋվ/ժ:

3. Արծվանիկի պոչամբարի γ-ֆոնի հետազոտությունը: Պոչամբարի առանձին հատվածների համայնապատկերները բերված են նկ. 7-ում: Արծվանիկի պոչամբարը գտնվում է Քաջարան քաղաքից մոտավորապես 34 կմ դեպի արևելք (շահագործվում է 1977թ.) և տեղակայված է նույնանուն գետի վրա: Ջանգեգուրի պղնձամուխբդենային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայից թափոնները պոչատարի միջոցով՝ մոտավորապես 35 կմ, տեղափոխվում և ամբարվում են պոչամբարում:



Նկ.7. Արծվանիկի պոչամբարի առանձին հատվածների համայնապատկերները

Պոչամբարի շրջակայքում ճառագայթային ֆոնի հետազոտություններն իրականացվել են SPARCS-M1 համակարգով՝ γ ճառագայթման ֆոնի գրանցմամբ: Համեմատական վերլուծության համար չափումներ իրականացվել են նաև հարակից Աճանան գյուղի մոտակայքում և Քաջարան քաղաքում: Չափումների երթուղին, որի ընդհանուր երկարությունը կազմել է մոտավորապես 63 կմ, համապատասխան չափման կետերով ու գրանցված ազդանշաններով պատկերված է նկ. 8-ում:

Չափումներն իրականացվել են պոչամբարի գրեթե ողջ շրջագծով: Տվյալների ճշտության գնահատման նպատակով իրականացվել են կրկնակի չափումներ՝ երթուղու հետադարձ ճանապարհին: Չափումների ընթացքում ամբողջ երթուղու երկարությամբ պոչամբարին հարող տարածքներում գրանցվել է ընդամենը 4 հատ Golf4 տիպի ազդանշան, թեև որոշ հատվածներում ճառագայթային ֆոնի կտրուկ տատանումներ են գրանցվել՝ առանց ռադիոակտիվ աղբյուրների հայտնաբերման: Պոչամբարի հյուսիսային և արևելյան կողմերում Golf4 կամ Golf5 տիպի ազդանշաններ չեն գրանցվել: Մինչդեռ պոչամբարի հարավային կողմում 472-րդ չափման կետում գրանցվել է 1 հատ Golf4 տիպի ազդանշան, սակայն առանց որևէ ռադիոակտիվ տարրի նույնականացման: Արևմտյան կողմում պոչամբարին հարակից 2073-րդ տարածքում՝ Աճանան գյուղից որոշակի հեռավորության վրա, 2291-րդ և 2292-րդ չափման կետերում գրանցվել են Golf4 ազդանշաններ: Եվս մեկ Golf4 ազդանշան գրանցվել է 2787-րդ չափման կետում: Նշված բոլոր կետերում γ ճառագայթման համարժեք բաժնեչափի հզորությունը գտնվել է 0,04...0,07 մկՋ/ժ միջակայքում:



Նկ. 8. Արծվանիկի պոչամբարի շրջակայքում ու հարակից բնակելի վայրերում իրականացված չափումների և երթուղու ընդհանուր պատկերը


4. Գեղանուշի պոչամբարի շրջակայքից և Քաջարանի պղնձամուլիբդենային կոմբինատի բացահանքից վերցրած նմուշների γ -սպեկտրաչափական վերլուծությունը: Գեղանուշի պոչամբարի նստվածքներից, հարակից հողային ծածկույթներից, ինչպես նաև լեռնային ապարներից և Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի բացահանքից վերցրած նմուշների փորձագիտական γ -սպեկտրաչափական վերլուծությունը կատարվել է Հայկական ԱԷԿ-ի և ՀԱՊՀ Միջուկային և ճառագայթաակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական վերլուծության հա-

մատեղ լաբորատորիայում: Հետազոտության համար նմուշները վերցվել են Գեղանուշի պոչամբարի հյուսիսային (նմուշ № 1) և հարավային (նմուշ № 3) մասերի նստվածքներից, ինչպես նաև նրանց հարակից ամբարտակների հողային ծածկույթից (նմուշ № 2, հյուսիսային և նմուշ № 4, հարավային): Լեռնային ապարների նմուշները վերցված են հանքանյութի արդյունահանման հանքավայրից (նմուշ № 5): Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի լեռնային ապարների նմուշները վերցվել են բացահանքից (նմուշ № 6-մոխրագույն ապար և նմուշ № 7-դարչնագույն ապար):


Վերլուծության նպատակն է նմուշների ռադիոնուկլիդային կազմի, դրանց տեսակարար ակտիվության որոշումը և ստացված արդյունքների գնահատումը: Նմուշների վերլուծությունը կատարվել է CANBERRA ֆիրմայի արտադրության ցածր-ֆոնային, բարձր-զգայնության γ -սպեկտրաչափական սարքով՝ գերմանիումային կիսահաղորդչային դետեկտորով և GENIE-2000 ծրագրային ապահովմամբ: Չափումների հարաբերական սխալանքը կազմում է 35...45 %:

Չափումից առաջ պոչամբարի նստվածքները և հողի նմուշները ենթարկվել են չորացման և այնուհետև մաղվել են, իսկ լեռնային ապարների նմուշը մանրացվել է մանրահատիկների 3...4 մմ/առավելագույն չափով:

Բոլոր նմուշների չափումներն իրականացվել են «գլան» երկրաչափական կտրվածքով: Չափումների տևողությունը կազմել է 3...4 ժամ: Նկ. 9-ում բերված են №1 և №6 նմուշների սպեկտրները:



Գեղանուշի պոչամբարի հյուսիսային մասի նստվածքը



Բացահանքի տարածքից վերցրած մոխրագույն/գորշ ապար

Նկ. 10. Նմուշ N° 1-ի և նմուշ N° 6-ի զամնա - սպեկտրները

Աղ. 2-ում ներկայացված են հետազոտության արդյունքները:

Աղյուսակ 2

Նմուշների γ -սպեկտրաչափական հետազոտության արդյունքները

Նմուշի անվանումը	Ռադիոնուկլիդային կազմը և տեսակարար ակտիվությունը, <i>Bq/kg</i>								<i>⁴⁰K</i>	<i>¹³⁷Cs</i>
	Ուրանի-ռադիումի շարք			Թորիումի շարք						
	<i>²²⁶Ra</i>	<i>²¹⁴Pb</i>	<i>²¹⁴Bi</i>	<i>²⁰⁸Tl</i>	<i>²¹²Pb</i>	<i>²¹²Bi</i>	<i>²²⁸Ac</i>			
Նմուշ № 1 (Գեղանուշի պոչամբարի հս. մասի նստվածք)	<1,5*	7,73	3,16	<1,5*	6,5	<1,5*	11	637	<1,9	
Նմուշ № 2 (Գեղանուշի պոչամբարի հս. մասի ամբարտակի հողային ծածկույթ)	24,7	13,6	19,3	49	36,8	52,2	9,1	734	<1,9	
Նմուշ № 3 (Գեղանուշի պոչամբարի հվ. մասի նստվածք)	<1,5*	3,73	2,66	<1,5*	3,5	<1,5*	3,7	594	<1,9	
Նմուշ № 4 (Գեղանուշի պոչամբարի հվ. մասի ամբարտակի հողային ծածկույթ)	3,4	8,2	9,5	8,0	6,4	8,96	11,5	503	<1,9	
Նմուշ № 5 (լեռնային ապարներ)	4,9	5,2	8,1	6,5	4,7	5,1	7,5	478	<1,9	
Նմուշ № 6 (բացահանքի մոխրագույն/գորշ ապար)	52,85	34	36,3	140	56,6	43,7	55,5	871	--	
Նմուշ № 7 (բացահանքի դարչնագույն ապար)	42,6	43,4	39,1	358	163,8	157,2	186,9	1386	--	

*1,5 Bq/kg -ը նվազագույն չափվող ակտիվության չափն է (MDA)

Բնական ծագման ռադիոնուկլիդների աղբյուր է երկրակեղևը: Դրանց թվին են պատկանում ^{40}K ($T_{1/2} = 1,3 \cdot 10^9$ տարի, բնական կալիումի մեջ պարունակվում է 0,0119% ^{40}K) և ^{238}U (ուրանի շարք), ինչպես նաև ^{232}Th (թորիումի շարք) ընտանիքների ռադիոնուկլիդները: ^{238}U և ^{232}Th շարքերի վերջնարդյունքներ են հեշտ օքսիդացող մետաղները, որոնց օքսիդներն ունենում են համեմատաբար փոքր խտություն, ուստի դրանք գերակշռում են երկրակեղևում, մայր և դուստր ռադիոնուկլիդները հիմնականում պարունակվում են միասին՝ օքսիդների ձևով: Մոնոլիտ լեռնային ապարներում և այլ «կնքված» կուտակատեղերում (թակարդներ) մայր և դուստր ռադիոնուկլիդները միասին են լինում և, որպես կանոն, գտնվում են ռադիոակտիվ հավասարակշռության վիճակում:

Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հետազոտված նմուշներում այս կամ այն չափով առկա են ուրան-ռադիումի և թորիումի շարքերի տրոհման դուստր արգասիքները, ինչպես նաև ^{40}K ռադիոնուկլիդը: Ընդ որում, բնահողի նմուշներում ռադիոնուկլիդների պարունակությունը զգալիորեն ավելի մեծ է, քան պոչամբարի նստվածքների նմուշներում: Ռադիոնուկլիդների պարունակության նման տարբերությունը, ըստ էության, պայմանավորված է արտադրական տեխնոլոգիայով, համաձայն որի պոչամբար են տրվում միայն հանքաքարի մշակման արդյունքում առաջացած թափոնները:

Պոչամբարի նստվածքներից, բնահողից և լեռնային ապարներից վերցրած նմուշներում առկա են բնական ծագման ռադիոնուկլիդներ (ուրան-ռադիումի և թորիումի շարքերի տրոհման դուստր տարրեր, ինչպես նաև ^{40}K): Այդ ռադիոնուկլիդների կոնցենտրացիան՝ համաձայն ԱԷՄԳ IAEA-TECDOC-1162/R փաստաթղթում նշված տիպարային միջակայքերի (աղ. 3), գտնվում է բնական ֆոնի մակարդակի վրա: Հետազոտված նմուշներում տեխնածին ռադիոնուկլիդների առկայությունը բացակայում է:

Աղյուսակ 3

Բնահողում առկա ռադիոնուկլիդների տեսակարար ակտիվությունը

Ռադիոնուկլիդ	Միջին ակտիվություն, Bq/kg	Տիպարային միջակայք, Bq/kg
^{40}K	370	100...700
^{226}Ra	25	10...50

Ուրան-ռադիում ընտանիքի ռադիոնուկլիդներով պայմանավորված ճառագայթման բաժնեչափի հզորության 99 %-ը պայմանավորված է ^{214}Pb և ^{214}Bi նուկլիդներով, իսկ թորիումի ընտանիքի ռադիոնուկլիդներով պայմանավորված ճառագայթման բաժնեչափի մեծ մասը պայմանավորված է ^{208}Tl և ^{228}Ac ռադիոնուկլիդներով: Բնահողում այդ ռադիոնուկլիդների կոնցենտրացիաների առկայության դեպքում, ըստ աղ. 2-ում բերված տվյալների, մթնոլորտային օդում Երկրի մա-

կերևույթից 1 մ/բարձրության վրա կլանված բաժնեչափի առավելագույն հզորությունը կկազմի $74 \cdot 10^{-9} \text{ Գր/ժամ} \approx 0,074 \text{ մկԳր/ժամ}$, որը բնական ֆոնից ավելի ցածր է:

iMatic ցածր ֆոնային տեղակայանքով որոշվել են բացահայտից վերցված №6 և №7 փորձանմուշների գումարային ալֆա և բետտա ակտիվությունների չափերը: Արդյունքները բերված են աղ. 4-ում:

Աղյուսակ 4

Փորձանմուշների գումարային ալֆա և և բետտա ակտիվությունների չափերը

Փորձանմուշի անվանումը	$\Sigma\alpha$ ակտիվությունը	Չափման սխալանքը	$\Sigma\beta$ ակտիվությունը	Չափման սխալանքը
№6 մոխրագույն ապար	0,147	$\pm 0,0220$	0,0152	$\pm 0,0088$
№7 դարչնագույն ապար	0,206	$\pm 0,0280$	0,0455	$\pm 0,0152$

Նմուշում հայտնաբերվել են U-238 և Th-232 շարքի դուստր նուկլիդներ, ինչպես նաև K-40 ռադիոնուկլիդ: Չափումների հարաբերական սխալը գտնվում է $\pm 10\text{-}30\%$ -ի սահմաններում:

Բացահայտից վերցված նմուշներում ուրանի և թորիումի շարքերի դուստր նուկլիդների հարաբերակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ թիվ 6 նմուշում U-238 և Th-232 հարաբերակցությունը տարբերվում է թիվ 7 նմուշում դրանց հարաբերակցությունից, եթե առաջին նմուշում U-238 և Th-232 պարունակությունը մոտավորապես նույնն է, ապա երկրորդ նմուշում Th-232-ի պարունակությունը 2-3 անգամ ավելի բարձր է, քան U-238 պարունակությունը:

Եզրակացություն

1. Կապանի լեռնահարստացման կոմբինատի Գեղանուշի պոչամբարի շրջակայքում, Գեղանուշ գյուղի մոտակայքում և Կապան քաղաքում կատարված չափումների վերը բերված արդյունքներով կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը.

1.1 Պոչամբարը տեղանքի γ -ճառագայթային ֆոնի վրա ազդեցություն չի թողնում, ընդ որում՝ պոչամբարի շրջակայքում γ ճառագայթման համարժեք բաժնեչափի հզորությունը չի գերազանցում $0,07 \text{ մկԶվ/ժ}$ և մոտ է հարակից Գեղանուշ գյուղի մոտակայքում գրանցված բաժնաչափի հզորության արժեքին,

1.2. Կապան քաղաքի կենտրոնում գրանցված γ ճառագայթման համարժեք բաժնեչափի հզորությունը ավելի բարձր է և կազմում է $0,1 \text{ մկԶվ/ժ}$:

2. Ջանգեգորի պղնձամոլիբդենային կոմբինատում շահագործվող Արծվանիկի պոչամբարի շրջակայքում կատարված չափումների արդյունքներից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը.

2.1. Պոչամբարը տեղանքի γ ճառագայթային ֆոնի վրա ազդեցություն չի թողնում,

2.2. Պոչամբարի շրջակայքում γ ճառագայթային ֆոնի համարժեք բաժնեչափի հզորությունը գտնվում է 0,04...0,07 մկՋ/ժ միջակայքում:

3. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բացահանքում կատարված չափումների արդյունքներից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը.

